

## **ՎԵՐ. ՅԱՐՈՒՏԻՒՆ ՍԵԼԻՄԵԱՆ ԿԸ ՀԱՆԴԻՊԻ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԵՏ**

Ուրբաթ, 23 Յունուար 2015-ի երեկոյեան, Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի Համայնքապետ Վեր. Յարութին Սելիմեան, Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեանի հետ հանդիպում ունեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հետ իր գրասենեակին մէջ: Տեսակցութեան ներկայ էր նաեւ Պէրութի Հայկազեան Համալսարանի Նախագահ՝ Վեր. Դոկտ. Փօլ Հայտօսթեան:

Հանդիպումը առիթ մը եղաւ ընդհանուր ակնարկ մը նետելու Սուրիոյ կացութեան ու յատկապէս Սուրիոյ զանազան շրջաններէն ներս հաստատուած հայ համայնքներուն դժուարութիւններուն ու կարիքներուն: Շեշտուեցաւ մէկ կողմէն մարդասիրական օգնութիւնը շարունակելու հրամայականը, իսկ միւս կողմէն ստեղծուած կացութեան լոյսին տակ մեր համայնքներուն ներքին կեանքը վերարժեւորումի ու վերադասաւորումի ենթարկելու առաջնահերթութիւնները: Այս շրջագիծէն ներս յատուկ կարեւորութիւն տրուեցաւ հայ դպրոցներուն:

### **Rev. Haroutune Selimian Meets Catholicos Aram I**

On January 23, 2015, Rev. Haroutune Selimian, the President of the Armenian Evangelical community in Syria along with Archbishop Shahan Sarkissian, the Primate of Peria (Syria), and Rev. Dr. Paul Haydostian, President of Haigazian University had a special meeting with Catholicos Aram I in his office. They discussed the situation of Armenian communities in different parts of Syria and confirmed humanitarian assistance as the immediate top priority. They also highlighted the central role that the Armenian school must play in the future reorganization of the communities.

